

ԵՐԿՈՒ ՔԱՆԱՆԱՅ ԵՒ ՍԵՄԻՆԱՐԻԱ.

Մեղուի 13րդ համարում՝ Աստրախանէն ուղղուած մի նամակի մէջ՝ տեղական հանգուցեալ երկու քահանայից համար Բաբայի ջերմանք շնորհ լինել ակնարկուած է որոյ դէմ մեզ անձանօթ մի պարոն կառուցեալ Մարտիրոսեան Թարգմանի ստորադրութեամբ՝ երկար և պաշտպանողական մի յօդուած է գրել՝ խնդրելով խմբագրութենէս հրատարակել զայն Արարատայ մէջ:

Յիշեալ նամակում աւելի կգոյուէր Սիմէօն քահանայն՝ որ Թեմ. Ատենի անդամութեան և գանձապետութեան պաշտօնը ըստ բաւականին խղճով և երկար ժամանակ վարած է, և տեղական ժողովրդեան սէրը և համակրութիւնը լիովին կվայելէր ինչպէս կրրէ յիշեալ նամակն:

Նոյն նամակն կյաւելու միւսնոյն համարի մէջ Աստրախանայ Արքեպիսկոպիտոսի (Թեմական Գրագրանոց) համար ևս Մեղուի հրատարակածը հերքելով թէ տակաւին Պայտեր հաստատութեան ոչ ինչ առաջարկուած չէ՝ որ Սեմինարիայի բացման յապաղման համար սորա և նորա վերայ կյարձակի և չն:

Յիշեալ նամակի ընդ դէմ՝ Մեղուի գործածած խիստ և պախարակիչ լեզուն միանգամայն յարձակողական կձու ակնարկութիւնքը հրատարակութեան արժանի չտեսնելով՝ այսքանով միայն կարևոր իմաստը քաղեցինք և ամիսօրինակը ի ծոց ամսագրոյս:

Ի Բ Ա Գ Ո Ւ Ա Յ.

Խաբար-Իսկան Արարատ Ամագրոյ.

Պարզացի Մշակի Թ. 6-ում յօդուած Գ. Ա. ստորագրութեամբ և «Միթէ աւետարանը վնասակար է, վերնագրով՝ որին ստիպուեցայ և ես պատասխանել այսպէս:

Արդոյ Գ. Ա. կարծելով ասումէ, թէ երբ մեր Ա. հաստատութեան հար-

կաւոր չի համարում թարգմանել աւետարանը աշխարհաբար լեզուաւ, այդ նշանակումէ՝ որ կամ՝ Նորին Ա. հաստատութիւնը չէ ցանկանում ազգային լուսաւորութիւնը և կամ՝ աւետարանի հասկանալին վնասակար է համարում: Իսկ ես ասումեմ, որ Ա. հաստատութեան հարկաւոր չէ համարում օտարներից թարգմանուած և խանդարեալ աշխարհաբար լեզուաւ եղած Ս. Գիրքը՝ այն պատճառաւ՝ որ տեսնումէ այդ թարգմանութիւնների մէջ սուրբ Գիրքը աղաւաղուած, «յերբոս», բառի տեղ «+խն ծակէրին», «հէլանոսի», տեղ «Յոյն», «չարաբան-իւսան», տեղ «ամբաստանութիւն», գրած և այլն և այլն, և զանազան տեսակ իւրեանց քմաց և մոլոր գաղափարաց յարմար այլայլած, որ միանգամայն ամենեւին չունի այն նշանակութիւնը՝ ինչ որ ունենումէ գրաբանի մէջ: Ա. հաստատութեան էլ, լինելով աւետարանի աշակերտ, պարտական է կատարել աւետարանի հրամանը՝ այն է արգելել այդպիսի աշխատութիւնները՝ որքան հնար է: Պարծեմ՝ արգոյ Գ. Ա. եթէ դու լինէիր ճշմարիտ մի շայ և անկեղծ ազգասէր՝ նոյնը կըխորհէիր և կաշխատէիր առնել այն՝ ինչ որ այժմ մեր շայրապետն է ասում:

Չէ, այս չէ նշանակում՝ որ Ա. հաստատութեան չէ ցանկանում լուսաւորութիւն ազգի, այլ այս նշանակումէ՝ որ Նա ազգի յառաջագիտութեան և աւետարանի հրամանին ճիշտ կատարման նախանձախնդիր է: Մեր գրաբան աւետարանը պարզ շարագրութիւն է և աւելի հասկանալի մեր ժողովրդին՝ քան աշխարհա-